

Ամբաս Բիրաս
Խմբագրութիւն «Փիիհնիկ» Ի
Աղեքսանդրիա



S. Burat
Rédaction «PUNIG»
Alexandrie

ԵԳԻՊՏՈՍ

ԱՐՏԱՍՍՉՍԱՆ

ՇԵՐ. 45
ՍՍ.ՐԵԿՄ.Ն. . . 25.
Վ.ԵՑԱՄՍԵԱՅ

ՅԵՐ. 75
ՍՍ.ՐԵԿՄ.Ն. . . 8
Վ.ԵՑԱՄՍԵԱՅ

ԲԱԹՆԵԳԻՆԸ
ԿԱՆԻԿ Ե

ԿՈՎԿԱՍ
ՏՆ.ՐԵԿՄ.Ն ՔՅՂ. 6

Փ Ի Ի Կ Ն Ի Կ

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՇԱՐԱԹ 11 ՅՈՒՆՈՒԱՐ 1902

ԹԻՒ 35

Փ Ի Ի Կ Ն Ի Կ
Իր Պատ. Հնթերցողներուն
Վ. Շ. Ն. Տ. 1/14 Յունվար 1902

ԱՄԱՆՈՐԻՆ ԱՌԹԻԻ


Կը մտնենք յահա՛ 1902ի սեմէն
նետւ. նախորդը կտակեց յաջորդին հր-
դեհներու, երկացունցի, մտական բար-
բարոսութեան ու ջարդերու անընդհատ
տարբեր մը Մայր-Հայրենիքի մէջ ու կարգ
մը ողբակասակերգական ներկայա-
ցումներ յեղափոխական կուսակցու-
թեանց միացումի փորձին՝ Արսասան-
մանի մէջ: Ահա՛ ամբողջ հաշուեցոյցը
հայ կեանքին վերջացող տարուան հա-
մար:

Մաղթե՛նք որ նոր սկսող տարին
բերէ իրեն հետ յոյսի ու ոգեւորութեան
նոր օրեր, Արսասանմանի հայ գաղթա-
կանութիւնը սթափի իր բունէն ու մը-
տա՛ծէ հայրենի օջախին, որ կը մտայ
հիւ՛սայ մոխիրով ու արիւնով...:

Մաղթե՛նք որ յեղափոխական ա-
ռողջ ուժ մը կազմուի հայ կեանքի
կազմակերպութեան ամբողջին մէջ
ու միութեան գիծ մը հաստատուի Ցե-
ղին ցիր ու ցան բեկորներուն միջեւ,
Ովկիանիայէն Պուլկարիա, Հնդկաս-
տանէն մինչեւ Ռուսիա, որպէսզի ան-
կախութեան երազնիս իրականա-
նայ...:

Մաղթե՛նք որ մեր երանելի Եգիպ-
տոսին համար ալ նոր տարեգլուխ մը բաց-
ուի ազգային գործերուն բարեօր վարչու-
թեան ու մասակարարութեան. Գահի-
րէի ու Աղեքսանդրիոյ ազգային երկու
դպրոցներուն մէջ սիրող անկարգու-
թեանը վերջ գտնէ ու Ազգ. ժողովներն
ալ սանձամաղրութեան տրամադրու-
թիւն համաձայն կազմուին ու գործին.
յօգոյս հասարակութեան:

Մաղթե՛նք որ Եգիպտահայ թերթերը գիտնան բարձր մնալ միտ ու առաջնորդել ժողովուրդի՝ նանոր մտաորական ու բարոյական մակարակար բարձրացրնելու համբուն մէջ:



ԼԻՌՈՒՄՈՒՆ ՀԱՄԱՐ



Ասկէ դեռ երեք ամիսներ առաջ եկեղեցոյ Երչափակին մէջ կը հանդիպէի խեղճ գաւառացի տղու մը՝ որ բոլորովին անխնամ՝ լուած ու ձգուած էր գետնին վրայ: Ինքնաբերաբար կը մօտենամ իրեն, հակառակ իր բացարձակօրէն վանող սրամաղրութեան, ու փաղափուտ ձայնով մը անուր կը հարցունեմ. շանթահար նայուածք մը կը ձգէ վրաս, նայուածք մը այն միացող թաց աչերէն՝ ուր ամբողջ հոգի մը կը լողայ սառապանքի. կը չոքիմ առջին, ձեռները շոյել կը փորձեմ, ետ կը փառուի զգուանով մը ու անհասկանալի մոլորութէ մը յետոյ, բարկութեամբ՝ «*ի՞նչ պիտի ընեմք անունս, թո՛ղ տե՛ք հաշոյս ասկիմ:*»

Ու ալ չեմ գիտեր, զգացումներուս վայրկեանական յախուռն դրդումէն ի՛նչ խաբող խոսումներ ըրի, որ վերջապէս կը սրամաղրուի քանի մը դրժուարահան բառերու մէջ անփոփել իր ցաւագին պատմութիւնը:

Յակոբիկ՝ Տրապիզոնի գիւղերէն, հազիւ 18 տարեկան, բոց աչերով, վայրենի երեւոյթով կարծր ու ուժեղ պատանի մը՝ արդէն բաւական ասեմէ ի վեր հեռացած հայրենի մայրենի գորովալիք գրկէն՝ Հացի ձամբուն վրայ իր սեւ բաղդէն փակուելով, եկած էր վերջապէս Ադեմաանդրիա, որ «ազգը» հանած էր սալ տեղ մը սալ իրեն... բաց երկնքին սակ:

Այն օրէն ի վեր մտէս չէր ելած

թուառ Յակոբիկը, ու կարգ մը տխուր խորհրդածութիւններէ յետոյ, որոնք ասեմէն ալ տխուր եզրակացութեան մը յանգեցան, ուզեցի «Փիւնիկ»ի միջոցաւ բարի մարդերու գթութեան մէջ ակնարկը դարձրնել, դարման մը տեսնելու համար այդ՝ «ազգ»ի շուրթնի սակ մարմնող լեռան գաւկիսն ցաւաստեց ու սիրտ հասցնող վիճակիս:

Բայց «ազգը»... [թէեւ ասով չեմ ուզեր արդարացնել դասաւարտելի լուսփունս] այն միջոցներուն զբաղած էր սահմանադրութեան պէս ամբողջ ազգին գոյութեան իրաւունքները պատշաճօր կենսական խեղճ մը բզկեցնելու, [գործունէութեան ի՛նչ տեղալի օրէ՛ր] միւս կողմէ վարժարանէն արտասուելու՝ հեմարտութիւնը միայն մասնանշած ըլլալու յանցանքովը՝ Վասպուրականի հարազատ մէկ գաւառը, որ համարձակած էր բննադատելի կողմերը ցոյց տալ վարժարանին ու վարժապետներուն, գիտակից ըմբռնումովը իր ըմբոսացումին. սակայն «ազգը» չ՛ուզեց իր այդ անհասին մէջ ամբողջ ազգի մը կրելիք լաւագոյն նկարագիրը շոշափել. ու փոխանակ փաշալերելու՝ թողուց որ օրերով թափառի ասդին անդին, միջոց մը գտնելու համար վերջապէս իր ազգային նուիրական յարկին սակ՝ իր ուսման պապակը գոհացնելու, բայց ի գո՛ւր. ու հէզ տղան, ա՛լ յուսահատ՝ դիմեց օտարին: Եւ անա իրաց այս տխուր վիճակին մէջ անլուրդ ըլլար թերեւս ուշադրութիւն հրափրել ազգին մէկ թուառ լակոսին վրայ՝ որ աղտոտ շուրթ մը պէս նետած էին գետնին երեսը, անօթի ծարաւ, բացի չեմ գիտեր, ո՞ր վարդապետին երբեմն մարդասիրական միլլիմներէն, որոնցմով գալարուն գոյութիւնը կը փախէ միջտեւ հիմայ:

Վերջին անգամ զիմք դուան մը ետին սալայասակին վրայ իր հայրենիքի ցնցոտիներուն մէջ փաթթուած ու

վառուած գայ. ա՛լ փոխուած էր խեղ-
նը, յուսահասութիւնը իր մագիլներուն
մէջ առեւ էր այդ մասաղ ու կոյս հո-
գին. ու կը մոնչէր ան՝ վիրաւորուած
առիւծի մը պէս. իր հոգիին աղետալի
նիչն էր որ սառապանքէն հասած սիրք
նանկոտելով վեր կ'ելլէր:

Խեղճ Յակոբիկ, դու ո՛չ առա-
ջինն ես ո՛չ ալ վերջինը. մարդոց ան-
սարքերութիւնը դեռ քեզի պէս միլիո-
նաւոր բուռուներու գոյութիւնը կը
հաջալերէ՛. սառապէ՛, խանձուէ՛ Վա-
րանիդ կրակովը, մինչեւ որ օր մընալ
քեզ չոր քախտակի մը վրայ դրած քա-
նին անխտութեան դռնէն ներս նետե-
լու, ու այն ասե՛ն միայն կը հասնին
քու աղուոր հոգիիդ ցաւերը, բուռն
արարած, նակասագրի դարապարտեալ,
սառապէ՛: Քեզ դեռ երկար ասե՛ն կը
բողուն այլ դռան ետին, մինչեւ որ
վերջին շունչդ սպառի՛ ըսելով՝ «ազգը
բող զիս իմ վարքանս իմ գեղս դիկ».
ո՛չ. խեղճ սղայ, այդ քու «ազգդ քեզ
համար չէ, ան ունի իր մարդերը, օր մը
Սմերիկա դրկելու, օր մը Ն:րոպա...
դուն սառապէ՛:

«Սզգը» — ո՛հ դառն հեզնութիւն
մընէ այդ բառը, որուն մեմաւնորհը
առած ըլլալ կը կարծէին դեռ մինչեւ
հիմայ աւասական դարերէ մնացորդ
քանի մը ետաւէր ու ապիկար պարուն-
ներ, որոնք ծաղրեցին ժողովուրդին
վասնհութիւնը ու խաղալիքի մը պէս
խաղացին անոր սեպհական անձեռնմխե-
լի իրաւունքներն հետ. օր ցերեկով
քիին նեմարտութեան երեսին, խեղդել
աշխատեցան արդարութեան խրոխտ
ձայնը. ամէն հնարաւոր միջոց գործա-
ծեցին Լեւոն Մկրտչեանի պէս մէկումը
գայրակղեցուցիչ գոյութիւնը պատե-
պանելու. չի կարմրո՞ղ մարդիկ. մին-
չեւ որ ա՛լ յոգնեցան նեմարտութեան
հարուածներէն ու ինկան խայտառա-
կորէն:

Եւ այս լիճոյն ու հակասական

երեւոյթները, Յակոբիկի պէս բուռու-
ներու ու Մկրտչեանի պէս... (1) պիտի
վխտան մեր այգերուն առջեւ, մինչեւ
որ խղճամիտ անկողմնակալ մարդեր
գործին գլուխը չանցնին ու իրենց նը-
մարիտ ազգասիրութեամբ նախանձա-
խընդիր չըլլան ազգային նուիրական
շահերուն, որոնք զոհ կ'երթան յանախ
ստոր կիրքերու եւ լղբուկ կամայա-
կանութեանց:

Ու անուրէս ատելորդ չը պիտի ըլ-
լայ անգամ մընալ անդրադառնալ այդ
դռան ետին հասնող բուռն արարածի
վիճակին՝ արդարացնելու համար գոնէ
անունը Աղբասախնամի մը որ գոյու-
թիւն ունի ու կոչուած է արցունքներ
սրբել, ցաւեր ու սառապանքն իր սփոփել.
մէկ խօսքով, բուռնութիւնները մեղ-
մել ընկերութեան՝ որուն մէջ կապրինք:

Մե՞ղք է Յակոբին, ան ալ իր վա-
թանը դրկել...:

ՎԻՐԱԺ

ՏԱՊԱՐԻՆ



Կանխիճեան ստացանք ներկայ գրու-
թիւնը, իբր պատասխան ԱՆԿԵՂՄՈՒԹԵԱՆ
ՊԱՅՄԱՆԸ վերնագրով ու ՏԱՊԱՐ usnru-
գրութեամբ յօդուածին, զոր հրատարակած
էինք ՓԻԻՆԻԿԻ նախորդ քիւին մեջ, այն
անկողմնակալ ոգիով, որմէ պէտք է ա-
ռաջնորդուի ամեն հակառակ քերթերու
խնթագրութիւն:

Այս առիւ չ'ենք կրնար սակայն ծած-
կել զգուանքը, զոր մեզի ազդեց Պ. Տա-
պարի յօդուածին անկերեղի ոճը:

Ո՛րքան քաղձալի է որ մեր հանրային
խնդիրներուն քննադատութեան հոգը ստանձ-
նող խնթագիրներն ու յօդուածագիրները, չը

(1) Կ'երեւի քե Տ. Վիրած ընթերցողնե-
րուն նաշակին ուզած է բողուլ պատշաճ
որակականի մ'ընտրութիւնը:

Մ. Խ.

շեղելով երբեք պատշաճութեան ուղիեն, յարգել գիտնան հակառակորդին անձնակա- նութիւնը:

Գահիրէ 7 Յունիսար 1902

Պ. ՏԱՊԱՐ, որուն իսկական անունն ու անձը մօտէն հանաչելու լցասին ու- նինք, ՓԻՒՆԻԿԻ 34րդ թիւին մէջ կը գը- բէր. «Գահիրէի Գալստեան ազգային վարժարանի բարեկարգութեան մասին աննպաստ ակնարկութիւն մը կար *Խաչո- Ջանի* թղթակցութեան մէջ:» Ու այդ *ան- նպաստ* ակնարկութենէն կը հետեւցնէ թէ *կողմնակցութեան ոգւով գրուած տղեր* են ու հետեւաբար՝ անկարեւոր: Սա- կայն, կը շարունակէ պ. Տապար, *մաս- նաւոր ուշադրութիւնս գրուեցին յօդուածին այն մի քանի տղերը, որով պ. թղթակիցը այլոց յորդոր կը կարողայ պատշաճաւ եղա- նակաւ խօսիչ ու գործել:*

Պ. Տապարի յօդուածը, գտեհիկ ու աննուստի ոնի գլուխ գործոց մը, կեղ- ծարարութիւն մ'է ամբողջովին. բոլոր տղերը այժէ անցուցի գտնել կրնալ ու գէթ հասուած մը, ուր հակառակը փաս- տուած ըլլար Պ. Խաչո-Ջանի թղթակ- ցութեան պարունակութեանը:

Բազմաթիւ ծնողներ սկսած են իրենց զաւակները գունդ գունդ ուրիշ դպրոցներ դիւել, անա՛ պարբերութիւնը, ու պ. Տա- պարի ջիղերը գրգռած է ա՛յն աստիճան որ կ'ստիպուի հարցընել. «Պ. թղթակիցը քանի՞ հաս մասի վրայ կրնայ համրել այդ *բազմաթիւ* ծնողներէն: Բազմաթիւ կամ *սակարաթիւ*, քանակին վրայ չէ՛ խնդիրը, պարո՛ն Տապար. Խաչո-Ջանի տուած տեղեկութիւնն ա՛յնքան հիշող է, ո՛րքան սխալ ձեռ ինքնապատշաճ- նութեան եղանակը: Դուք ձեռ գրութեան ամեն մէկ տղին մէջ անկեղծի, նեմա- տախօսի, խղճամիտ քննադատի հովեր կը դատէք, պատասխանեցէ՛ք ուրեմն. Գալստեան վարժարանը չէ՞ հիմա *Գառն* մը, *Բարեշուն* մը լեզուներու եւ ուրիշ անպիտան *ուրիշներու*: Յանախողները ի՞նչ կը սովորին հիմա այն, ընդ հովան-

եաւ *բարոյագէտ* հոգաբարձուին ու վե- ջին նորածնութեան դրոճը կրող *յաչ- տագրիւն*:

Սակայն հեռուները չ'երթանք. ար- տուստիւն առէք ձեռ պ. Տնօրէնէն, կէս ժամ կը բաւէ, ձեռքերնուդ բռնեմ պար- ցընեմ կարգաւ, *Շրեթներուն, ճեշուրիցնե- ներուն, Սենդ Մերիի, Գեանձեանի*, եւն օ- տար դպրոցները. գիտէ՞ք, քանի՞ քանի հայ աշակերտներ կը խամրին հոն ու կը խոր- քանան. մէկիկ մէկիկ կուզէ՛ք *մասի վրայ* համրեցէ՛ք, կուզէ՛ք տեղ մը նեւ- նակեցէ՛ք այն բազմաթիւ *եան* մակա- նուցներով երկսեռ աշակերտները, որոնք քու պատշաճանել փորձած երբեմնի ա- տելի ու արդի սիրելի Գալստեան վար- ժարանիդ նստարանները քափուր թողած մեկնա՛ծ են:

Չընեղուի՛ս, *արեւո՛ւղ խնդաւ*, այս այսպէս է, ես ալ գիտեմ, դուն ալ. ա- րեւի պէս պայծառ նեմատարութիւն մ'է որ անմահ վասպուրականցիին կտակը՝ կարգ մ'անօրի, *աննարակներու ետրակիչ* եղած է ու կ'ըլլայ...:

Միթէ Խաչո-Ջանի երեսին *քեզ ան* դուրսա՛ն ուսմիկ հեզնութիւնը նետելով հերքա՞ծ կ'ըլլաս անոր թղթակցութեան ո՛ր է մէկ հասուածին իմաստը. ի՞նչ, *կունս դուրս*, *մտախաչապատ ըղեղ*, *քառա- կուսի գլխու մակերեւոյթ* եւ ուրիշ այս տեսակ շողիքի նմանող ներկերո՞վ սըն- գուրել ու ծեփել կը կարծես սգեղութիւնը Գալստեան վարժարանին, որուն այսօր ելեր պատշաճութեան հոգէն ես բրո- նուր այն միակ ու անխոստովանելի տրամաբանութեամբ թէ՛ հոն կը դասա- խօսես աստե՛ն մ'ի վեր. ապրի՛ս, ո՞վ պատուելի հայկաբան, որ հաւերներուդ ուժովը՝ *սկիւնայ մասնագէտ* դարձած ես...:

Տա՛ք տա՛ք շունչերու արտաբերու- մէն օդը ապականած խուցի մը մէջ քաշուած, գոլորեթներէն զինուկցած ու քմրած հարցուկի մը պէս մի՛ դելփեան պատգամներ՝ քափեր հրապարակին վրայ: Հասարակութիւնը գիտէ ամեն

բան, բայց կը լռէ ասեմ մ'ալ, որովհե-
 սեւ կը մտածէ որ քերթերու մէջ աղմուկ
 չ'արժեք հանել *ողայ հոգաբարձուներու*
 շուրջը — որոնց համար կ'առաջարկես որ
 գոնէ *սարի մը միջոց տուի հանգստ մը-*
քով շարունակելու իրենց . . . Բանդումի
 գործը — Բանի որ մօտեւ վարժարանին
 խորհրդարանին սեմին դուրս պիտի դը-
 ուին ասոնց այն մտակով, որուն կարօս
 կը կարծես *Խայօ Զանի* պէս անկեղծ
 ու անկախ երիտասարդ մը — որուն միակ
 յանցանքն եղած է դպրոցին իրական
 վիճակը հրապարակ հանելը: —

Հանրային դժգոհութիւնը դժբաղ-
 դաբար չը պիտի պակսի, ցորչափ Պ. Տա-
 պարի պէս *անվնաս*, կամ ամէլի միջոց,
անօգուտ վարժապետներ, առ ի չգոյէ
 դրսէն համակիրներու, Գալստեան վար-
 ժարանին կորսուած դասը պատշաճան-
 լու սխմարութեամբ՝ յօղուածագիր —
 փաստաբանի մուծակին սակը մտնել
 կը փորձեն որ իրենց անլի գրուածներով
 հանրութեան օգտին ծառայած ըլլալ
 կը կարծեն . . .

Այդ կարգի ու որակի յօղուածա-
 գիրները չե՞ն որ էր կարօտին . . . դնչա-
 կալի:

ԿԱՅԾՔԱՐ

ԵՐԳԸ

Գիշե՛ր եր. փողոցները լուռ քափուր.
 Խուռք մը մարդիկ շրջապատած կտտ
 մ'աղբի,
 Ճնցոսիներ հագուած, պէս պէս, գոյնզգոյն,
 Եկան մայրեղ դանդաղաբայ, կոյուղիներ:
 Բացին քարը: Այդ մարդերէն մին զըւարթ
 Սոքեց արագ իր ոտներն ու բազուկներ,
 Առ մե՛կ ուսմանք մըսաւ, քա՛ն քա՛ն խըկ-
 դարով,
 Բացուածքին մեջ, ուրկե հոս մը գարշելի
 Ա.մեկ կողմ կը ծաւալէր:

Առ ըսկրաւ երգել խոպոս ճայնով խուր,
 Այդ գարշանոս բուռուներէն գիկնովցած,
 Հրճուակնով մը սիրք արբշխ, երջանիկ,
 Մարմինն արքողոջ աղբի կեղտով ներկըւած.
 Կը բարձրանար երգը աղտոս, զգուելի,
 Երբեմն ուժգին աղաղակ մը գոնուակ,
 Երբեմնքն մեղմ ելեւեղներ, ունուներ.
 Կը պոռթկային կոյուղիից խորերէն.
 Առ կ'երգեր ան, կ'երգեր, կ'երգեր շարունակ.
 Եսխ ծիծաղ մը սլճանքի, պրկրեցաւ
 դեմքիս վրայ:

* * *

Առ կ'երգեր ան, կ'երգեր, կ'երգեր շարունակ.
 Անոր շեշտէն անկերդաշնակ
 Մըսածուրի սեւ անկերու սակ սակաւ
 Հակասու արքողոջ պատեցին,
 Առ խոկերու սեւ քերտով վերացած՝
 Ինձ քըւեցաւ քե՛ դա անեծք մ'եր դաժան,
 Անգո՛ւր անեծք, խուր անեծք մը մոլեգիկ
 Ա՛խ, սա անարգ պայտաններուն դեմ
 կեանքին,

Առ հայնոյակ մը մարդկութեան դեմ անսիրտ
 Այր պահանջները նոյնիսկ
 Մարդը աղբի գործիք մը պարզ շիկիկ:

Առ կ'երգեր ան, կ'երգեր, կ'երգեր շարունակ.
 Առնուները գերդ-բողոք
 Ինձ ցուրտ սարսուռ մը սայիկ,
 Կը պատէին ինձ կարծես
 Թե կեանքին մեջ կային մարդիկ անհամար
 Որով այդ խեղճ մարդուկին պէս անզգայ
 Կրկերու ցած կոյուղիին մեջ աղտոս,
 Երկերու պէս խուժէին,
 Առ կ'երգէին հոն զըւարթ,
 Զերդ դահիճներ քարասիրտ՝
 Որով ժպտով կը հայիկ ցալին վրայ գո-
 ներուն:

* * *

Երգե՛, երգե՛ կոյուղիից խորերէն,
 Երգե՛, մարդո՛ւկ, երգե՛ ուժգին, անդադար.
 Թո՛ւ դ հայնոյակ մ'ըլլայ երգը, անեկուն,
 Երգը ըլլա՛յ քոյ անեծք մը քո՛ւրքն դաժան.

Ի՛նչ փոյր, ունակ արհաւարեան զայն,
 խնդան,
 Թե կարենաս զեք մըսածել սալ մեկուն,
 Թե կարենաս խղճի խայր մը արթնցնել,
 Ա՛յր ալ բար է, բու վրեժժիդ իբր լուծում:

* * *

Ք Ր Ո Ն Ի Կ

Ա.ՉԳԱՅԻՆ

-- Տե՛ղ Ա.ԿԱՆ Ա.ՉԳ. ՀԱՐՅԸ լուծուելու շաւիղը մտած է արդէն, Առժ. Թաղ. Խորհուրդին լուծումովն ու Գրագրին - որուն վրայ արժածէն աւելի խօսուեցաւ - համբուելովը: Գրագիրը համբուած ըլլայ կամ ինք հրաժարած, Տեղիս հասարակութեան համար զուրկ է կարելորութենէ ու Մամուլին համար՝ քաղուած դիակ մ'է այդ պարագան: «Փե՛ն, Ի մէջ մղուած պայքար սահմանափակ նպատակով մը չ'էր ու չէ՛. մէկէ աւելի են հայեցակէտերը. Ազգ. Օրէնքին գործադրութիւնը, Ազգ. շահերուն պահպանութիւնն ու բարգաւաճումը, Ազգ. Վարժարանին բարեկարգումը, նորանոր Ազգ. հաստատութեանց ստեղծումը, Եւ: Ուրախ ենք լսելով թէ՛ Վսեմ. Պողոս Բաւային ալ բաղձանքն է այս ամենը. պառակտմանը բարձումը, օրինաւոր Թաղ. Խորհուրդի մ'ընտրութիւնը, Ազգ. իշխանութեան ու հասարակութեան միջեւ իրաւունքի վստահութեան ամրապնդումը: Տեղիս Առժ. Թաղ. Խորհուրդին հետ Աղէտախնամի անդամները խնդակցական հեռագիրներ ուղղած են Վսեմ. Պողոս Բաւային, անուան տարեդարձին առթիւ, գովելի փութկոտութեամբ մը, զոր կը շնորհակալուենք՝ առ լա՛ւ, բայց լաւագոյն չէ՞՞ տեսականէն աւելի գործնականին մէջ ջանալ հանելի ըլլալու՝ Դորին Վսեմութեան, իր փափագներուն իրագործումը դիւրացրելով...:

Իսկ Սրբ. Առաջնորդնի՞ս. - միզարգելութեան կը տառապի. միզարգելութիւն, որ զինք ստիպեց բա՛ցակայել կարելո՞ր նիստէ մը, միևնոյն չ'արգիլեց իր ներկայութեամբը պատուելու նոյն օրերը կատարող հարսանեկան հանդէ՛ս մը...: Ինք որ կը գտնուի Ազգ. բարձր իշխանութեան գլուխը, պէ՛տ է նախ ինք յարգել զիսկայն Ազգ. Օրէնքը, որուն ուժովը միայն կրնայ պահել իր ա՛յնքան սիրական պաշտօնը: ու պահել զայն իրեն խնամքին յանձնուած հօտի՞ն օգտին, ոչ թէ լոկ իր փանախի շահերուն երաշխաւորութեանը սիրոյն:

— ԿԻԼԻԿԻՈՑ ՆՈՐԸՆՏԻՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ Տ. Տ. Գեորգ Սրբազան Երեցեան, կը գրեն Պոլսոյ հայ քերթորը, հրաժարեցաւ, առարկելով թէ Սոոյ Ս. Աթոռին բազմապատիկ պէ՛տքերը զոհացնելու եւ բոլոր թեմերուն մէջ գոյութիւն ունեցող զանազան դժուարութիւն-

ները հարթելու չափ ուժ չ'զգար ինք իր մէջ: Անա՛ պարկեշտութեան օրինակ մը, զոր կուգայ սալ Տ. Տ. Գեորգ Սրբազան, խոսովանելով իր ապիկարութիւնն ու այս կերպով օգտակար ծտայութիւն մը մատուցանելով կիլիկիոյ, որուն բա՛նուր Աթոռը կը կարօտի անուրից հօրագոյնն ու աւելի տկուն Գահակալի մը:

Կը վստահուի միայն թէ այս հրաժարականը պատճառակ մը չ'ըլլայ Նըլսրգի ձեռքը, անպայմանօրէն յետաձգելու ուրիշի մ'ընտրութեան ձեռնարկութիւնը:

Կիլիկիացիները սակայն, պէ՛տ է որ լաւ հաճուած ըլլան թէ՛ հասարակ Սրբազանէն զայն ո՛չ ոք պիտի կրնայ վարել արժանաւորապէս հայրապետական փափուկ պատճօնը, եթէ անխուսափելիօրէն կիլիկիացի Եպիսկոպոսներէն չէ՛ որ պիտի ընտրուի Կարօնիկոսը: Այլապէս, կիլիկիոյ Ս. Աթոռին միակ արժանաւոր Գահակալը կրնայ ըլլալ Գեորգ Տ. Մկրտիչ Սրբազան Վեհապետէն:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

— ԱՆԿԼԻՍՆ ԵՒ ՌՈՒՍԻԱՆ, Ռուս դիւանագէտ մ'ամսոյս 4 ին նեյշընելոյ Տրոփոնի մէջ յօդուած մը հրատարակեց, որով կը յայտարարէ թէ դիւրին է Անգլիոյ եւ Ռուսիոյ միջեւ Կեդր. Ասիոյ վերաբերութեամբ համաձայնութիւն մը գոյացնել եւ թէ՛ Ռուսիան չը խորհիր արեւել չ'ընկալուան:

— ՏԱՄԱՏ ՄԱՀՄԱՌԻՏ բաւան վերջնապէս մեկնելով Գորճուէ Պրինսիպի համբով Հռովմ հասաւ: Պրինսիպիէ Հռովմ մասնաւոր շոգեկառք մը տրամադրուած էր անոր: Նոյնպէս մեծ յարկաբաժին մը բռնուած էր իրեն ու իր հետեւորդներուն համար Կրաւնոյ օդէն յի՛ն մէջ:

Շատ մը բուրբ երեւելիներ (Ալբանացի Գովթէէն մանաւանդ) Հռովմի կայարանը գացին ողջել մաղրելու համար նոր հիւրին:

— ՖՐԱՆՍԱՆ ԵՒ ԻՏԱԼԻԱՆ. Վիեննայի մէջ Ֆրանսայի ու Իտալիոյ մերձեցումը կը նկատուի ծանրակեղծ ու կարեւոր գործ մը, որ անյապաղ պիտի իրականանայ: Երկու Տէրութեանց

[Աւստրիա եւ Իսպիա] դուրս ելնելը Երեւակէն, այս նոր փողովական շրջումին անհրաժեշտ հետեւանին է: Եղբր կրսուի Վիէննայի մէջ:

Մինչդեռ Նիու Ֆելչ Բէէս քերթը կը կարծէր թէ այս ամենը ճրանուական հանրապետութեան մէկ դարձումն է Իսպիայ հետ, Անգլիան կողմացնելու համար:

Նայն քերթը կ'աւելցնէր թէ Իսպիայ գործին չ'գար խզել իր յարաբերութիւններն Երեւակին հետ, Ափրիկեան Տրիպոլսոյ մէջ գործողութիւն մը կատարելու պարագային:

— Ափրիկեան Տրիպոլսոյ վերաբերեալ համաձայնութիւն մը կ'նկուեցաւ ամսոյս 5ին, Ֆրանսայի եւ Իսպիայ միջեւ:

— ՅԲՄՆԳԹ—ԻՏԱՆԱՎԱՆ նոր համաձայնութիւնը Միջերկրականի նկատմամբ, բուն վիճաբանութեանց առարկայ եղած է Վիէննայի ու Պէրլինի քերթերուն մէջ: Այս համաձայնութեամբ Ֆրանսան կը հաւանի յաջողցնել Տրիպոլսոյ մէջ իսպախական ըզձանկները, Իսպիան ալ նոյնը կ'ընէ Մարոքի վրայ Ֆրանսայի դիտումներուն համար:

— ԴԲԻՊՈՒՆԱ քերթը կ'իմացընէ Ֆրանսայի թէ իր բարեկամութիւնն Իսպիայ հետ արգելի չը կ'ընար ըլլալ այս վերջին Տէրութեան ուրիշներու հետ ունեցած բարեկամութեան կամ դաշնակցութեանց: Իսպիան ի հարկէ կը պահէ իր գործելու ազատութիւնը:

— ԲԱՆԱՄԱՅԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ պաշտօնապէս կ'առաջարկէ Միացեալ Նահանգաց թողուլ իր բոլոր ստացումները 40 միլիոն օղարի:

— ՌՈՒՍԻԱՆ ՌԻ ՀԱՅՅԵՐԸ Լ'ԷՐՕՐՔԷՆԷ կը բարգմանենք այս օրերը ուր յստակօրէն պարզուած են ռուսական դիտումները:

Ահաւասիկ ռուսական ծրագիրները:

«1900ին, Գոնեա-Պաղսոս գիծը Գեր-

մանկերուն յանձնուած ըլլարով, ռուսական դեսպանը փոխարինուակեր կը պահանջի: Կը խնդրէ Ռուսերու համար գերակշռութիւնները շիւնելու եւ շահագործելու ամեն ապագայ գիծ իրենց ասիական սահմանագիծին դրացի վիլայիթներուն մէջ: Դաւակից Գերմանիոյ կոքնած՝ Ռուսիան Սուրբանէն ստացաւ քերական խոստում մը Էրզրումի եւ Տրապիզոնի վիլայիթներուն համար: Սուրբանը կը յայտարարէ ասիկ զոսրէ՝ Սվազի վիլայիթին մէջ Թուրքերը միայն, եւ ոչ մէկ օտար, պիտի ստանան առանձնաշնորհումներ: Կարեւոր նայեցիք ու շուտով պիտի տեսնեք թէ հասարակ շեզուով ի՛նչ կրնան նշանակել այս յանձնառութիւնները:

Տրապիզոն, Սեւ Ծովուն վրայ, Մեծ-Հայաստանի նահանգները սակող նաւահանգիստն է: Էրզրում, Լեւոնք, շուրիսն է ու քերդը, ուր կը միանան Մեծ Հայաստանի նահանգները հասնող երկու ճանքները, մին կարսէն կուզայ ասիական Ռուսիային, եւ միւրը՝ Պաշտօնին, Պարսկաստանի կողմէն: Սվազ, հայկական վիլայիթներուն կեդրոնը, դիպ հորիզոնին շուր անկիւնները բաժնուող բոլոր ճանքներուն փոխադրէն: արեւելքը, դիպ ի Կարին եւ Ռուսիա. հիւսիսը, դիպ ի Սամսոն ու Սեւ Ծովը. արեւմուտքը դիպ ի Էնկիւրի ու Կ. Պոլիս. հարաւ-արեւմուտքը, դիպ ի Գոնեա, Ասախիս կամ Իզմիր. հարաւը, դիպ ի Մարաշ եւ Ադեմսանդրեակի ծոցը: Բանուկ շեզուով, Ռուսիան կը պահանջէ ուրեւե՛ն Մեծ-Հայաստանի գրաւումին հարկաւոր բոլոր գիծերուն ապագայ ստացումը կամ հսկողութիւնը: Ասեւնադոյզն թէկորին անմիջական առանձնաշնորհումը չ'ուզէր:

Անի կարգաւոր է իր ձեռնարկներուն մէջ: Զինական գործը գիւնի կ'զբաղեցնէ, եւ ցո՛րչափ իր ուժն ու ուշք բռնուած ըլլան հոն, պիտի շատանայ հոսրի կանխարգել զգուշութիւններով ու յանձնառութիւններով: Բայց գրաւոր յանձնառութիւններ կ'ուզէ, ու երբ որ Զինական գործը կարգադրուի, ինչ աւելի սխիպող կը դառնայ: Երբ Բեֆիւնի կողմէն ազատ ըլլայ, կ'ուզէ որ Կ. Պոլսոյ մէջ բոլոր նախապատասխան աշխատանքը կատարուի: Երբ Մանչուրիային տրանսպորտ մարտի մարտի վերջնապէս տէր դառնայ, այն ատեն հո՛ւ պիտի փոխադրէ իր մարդիկը, մերթն ու մեքոնները: Զի հոս մօտ է սկսելու դիպ ի նոր ազատ ծով մ'արշաւելը: Եւրոպան ու-

զէ չ'ուզէ, Աղեփասնորեալի ծոցին եզերք
Բայսս, այս կամ այն ձեռով, օրին սկիբ
պիտի ըլլայ ընդ Բօրք Արքուր մը, ու բըր-
փակն Մեծ-Հայասանը՝ Զինական ընդ Ման-
շուրիս մը:

«Ասոնք են Տ. Զինավիճի խորհուրդ-
ները, կ'աւարտէ Տ. Վիգոր Պերար, ու,
ապահովապէս, Զարին Բարսաղարաբեան
ասիական գործերուն նստիչն Տնօրէնը՝ հա-
ւասարիք բարգձման է լսկ իր կ'աւարու-
թեան: Հիմայ կը հասկցուի՞ր քէ անի ինչո՞ւ
երկու ամիս վարանեցաւ Թրանսական պահան-
ջումներուն կողմը բռնելու, եւ քէ՞ ինչո՞ւ մեր
«բրփական գործ»ին «Հայիական գործ»ի
բարգձմանը Ս. Բերսաղարեան վաւե-
րացում չը գտաւ: Ու կը հասկցուի՞ր մեր նա-
խարարին լեզուն իտարարանին մէջ, որ 4
Նոյեմբերին կը պարտաւ իրեն. «ՀՕՅԱՍՍԱՆ»:
Նախարարը յայտնապէս շուարած, կը մեր-
ժեւ ամեն խոստում: Արդեօք բարեկամ տե-
րութեան միջամտութիւնը վերջե՞րս ձեռք
բերուեցաւ հայկական գործին, նկատմամբ
յանձնառութիւններէ յետոյ միայն: Տ. Տեղա-

սէ մօտերս պիտի մեջտեղ դնէ Հայասանի
մէջ իր քաղաքականութեան սկզբունքները:
Սպասե՛լ պիտի է: Անոնք որ իր վարմունքը
չեն մոռցած կրեական գործին մէջ՝ կը յու-
սան քէ պիտի կրնայ նորէն զսնել 1898ի իր
լեզուն. բայց կէս մը կայ որ, հիմնականք
պիտի չէ մուրի մէջ բազուկ: Ռուսները կ'ու-
զեն Մեծ-Հայասանը ու մեր ընդհանուր քա-
ղաքականութիւնը մեզ կը կ'աւարանէ: անոնց
կողմը: Ուրեմն ըսենք քէ անհպելի՞ր է հայ-
կական հարցը: Մեծ Հայասանը բոլոր
Հայասանը չէ՞, ու, առ այժմ, Թրան-
սական խիղքը պիտի գոն մնար, եթէ գեթ
զարդերը ջնջուէին Փոքր Հայասանին այն
անկիւնը, ուր անյիշատակ ժամանակէ ի վեր,
ի գաւ զրամ ենք իրական քեւարկութիւն մը.
այն դիւցազնական Զեքունի մէջ որ, Պերու-
քի ծովին այնքա՛ն զրացի, կրնայ ու պարտի
ըլլալ Հայ Լիբանան մը: 1863ին, Թրանսա-
կան դեպքանք Բ. Իրան կը յայտարարէ քէ՞
«Թրանսան՝ Զեքունը ձեռնաձեռն է միշտ ան-
կախ ու հարկերէ ազատ:»

SALAMANDER

ՍԱԼԱՄԱՆՏԵՐ

Ապահովագրական Ընկերութիւն
ընդդէմ հրդեհի.

ԱՄՍԹԵՐՏԱՄ

Դրամագլուխ 3,125,000 ֆրանկ

Ամեն կերպ Ապահովագրութիւնը կ'ընդհանուին ընդդէմ հրդեհի ինչպէս
նաև Ծովային, Գետային և Յամաքային փոխադրութեանց արկածներու դէմ.

Դիւրամատչելի գներ և պայմաններ

Դիմելը առ Ընդհանուր Գործակալ եւ Լիւզօր-Փոխանորդ

ՄԻՀՐԱՆ ԳԱԼՅԱՆԱՆ

Աղեփասնորիս, պղտիկ Մեհիշի Ապուսարսա փողոց թիւ 10

L'ALLIANCE

Լ'ԱԼԻԱՆՍ

Ծովային Ապահովագրական Ըն-
կերութիւն.

ՊԵՐՍԻՆ

Դրամագլուխ 5,000,000 ֆրանկ